

նշանակե, թե քիւրտերը համաձայն են, որ Արեւմտեան Հայաստանը ըլլայ երկու եղբայրական երկիրներ, մէկը Ուիլսընեան Հայաստան, իսկ միւսը Քիւրտիստան:

Արեւմտեան Հայաստանի տարածքին, արդեօք գիտէ՞ք ստոյգ թիւը Հայկական արմատ ունեցողներուն:

Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջիկութեան նախարարութեան կայքէջին վրայ գրուած է, «հայ բնակչութեան թիւը Թուրքիոյ մէջ, Համաշխարհային առաջին պատերազմէն առաջ եղած է 1.2 միլիոն, որոնցմէ 400,000-ը, պատերազմի պատճառաւ, վտանգաւոր ճակատներէն փոխադրեցինք աւելի ապահով շրջաններ, այդ ընթացքին տարբեր պատճառներով 40,000 մարդ սպաննուեցան կամ մեռան, իսկ մնացածը ողջ հասան իրենց վերջին կայանը»: Հոս, 800,000 հայու խօսքը չէ յիշուած իրենց կայքէջին վրայ: Իսկ Միացեալ Նահանգներու Գոնկրեսի Գրադարանի արխիւներուն մէջ գրուած է, որ Հայութեան թիւը Թուրքիոյ մէջ, հոկտեմբեր 29, 1914 թուականէն առաջ եղած է երեք միլիոն: Ուստի եթէ նկատի առնենք 1.5 միլիոն հայեր ջարդուեցան, եւ 700 հազարը փրկուեցան՝ «համաձայն Թուրքիոյ վարձկան մեծանուն գիրքերու հեղինակ Ճօ Մքարթիին», ուրեմն հոն կը մնայ տակաւին 800,000 մարդ: Ահաւասիկ կը տեսնենք, թէ երկու պարագաներուն ալ 800,000 հայու թիւը կը բացակայի արխիւներէն: Ուրեմն պարզ է ու յստակ, 1915-ին 800,000 հայեր այս կամ այն ձեւով, կամ զէնքի սպառնալիքի տակ, կրօնափոխ եղած են: Թուրքիոյ պետական պաշտօնական 2012 թուականի մարդահամարի համաձայն, 1927-էն 2012, Թուրքիոյ բնակչութեան թիւը, մեծ քաղաքներուն մէջ 6.5, իսկ աւելի փոքր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ եօթ անգամ աճ արձանագրած է: Ուստի, 800,000 իսլամացան 1915-ին, իսկ այսօր եօթը անգամ բազմապատկուեցան, այսինքն 5.6 միլիոն Հայու արմատ ունեցողներ գոյութիւն ունին ամբողջ Արեւմտեան Հայաստանի տարածքին:

Արդեօք յարաբերութեան մէջ էք հոն ապրող հայերու հետ:


Այո, վերջին եօթը տարիներուն մենք յարաբերութեան մէջ ենք աւելի քան մէկ միլիոն Հայկական արմատներ ունեցողներուն հետ, որոնցմէ յայտնաբերած ենք 750,000 մարդ, որոնք կ'ըսեն, թէ իրենց երակներուն մէջ հայու արիւն կայ, եւ թէ իրենց փափաքն է վերադառնալ իրենց ազգութեան: Այդ հսկայական թիւէն, մենք արդէն յաջողած ենք տասնաւորներ վերադարձնել իրենց արմատներուն. Պարգապէս ըսեմ, որ ժամանակ առ ժամանակ, նմանօրինակ հայերու քանի մը պատկերներ իրենց անուններով նոյնիսկ կը զետեղենք դիմատետրի վրայ:

Ծայտուած հայերը յայտնաբերելու եւ իրենց ազգին վերադարձնելու գործին մէջ դժուարութիւններու կամ խոչընդոտներու կը հանդիպի՞ք:

Իրապէս շատ են դժուարութիւնները: Ոմանք կը բնակին շատ փոքր գիւղերու մէջ, ուր կ'ապրին միայն 10 ընտանիք. որոնք երկար տարիներ ապրած են որպէս քիւրտ, ուստի իրենց ազգին վերադառնալը կրնայ անախորժութիւններու տեղի տալ: Կան հսկայական թիւեր, որոնք կ'ըսեն, թէ իրենք համայնավար են, այսինքն իրենց համար կարելոր չէ եկեղեցին, այլ իրենք կուզեն վերադառնալ իրենց ազգին եւ ոչ թէ եկեղեցիին: Մեծ թիւ մըն ալ կայ, որ բոլորովին անհաւատ են, բայց կ'ուզեն վերադառնալ իրենց ազգին եւ ոչ մէկ ձեւով եկեղեցիին հետ յարաբերութիւն ունենալ: Թուրքիոյ տարածքին, այն անձը, որ իր արմատներուն վերադառնալ կը փափաքի, պետք է մեր եկեղեցիին մէջ մկրտուի, որպէսզի կարենայ Հայու ինքնութիւն ստանալ. Ահաւասիկ հսկայական դժուարութիւններ:

Ինչպէ՞ս պիտի կարգադրուին այս հսկայ խոչընդոտները:

Արեւմտեան Հայաստանի Պաշտպանութեան Խորհուրդը, կ'առաջարկէ, որ մեր պետութիւնը, մեր եկեղեցին, մեր կազմակերպութիւնները, միութիւններն ու ժողովուրդը միջին եզր մը գտնեն, որ կրնայ յարմարուիլ բոլորին: Որովհետեւ եթէ մօտ կամ հեռաւոր ապագային, միջազգային օրէնքով պահանջելու ելլենք Ուիլսընեան Հայաստանը, մեզի չ'ըսուի միեւնոյնը՝ ինչ որ ըսուեցաւ 1920 թուականին, թէ հայ բնակչութիւն չկայ ձեր պահանջած հողերուն վրայ:



ԱՆԴՐԱՆԻԿ ԷԿԻՏՊԱՇԵԱՆ